

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

1 ապրիլի 2014 թ.

N 196-Ն

ք. Ստեփանակերտ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 29-Ի N 135 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ընդերքի մասին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսգրքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը և 62-րդ հոդվածի 8-րդ մասը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը **ո Ր Ո Շ ՈՒ Մ է**.

1. Սահմանել օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 29-ի «Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի վարման կարգը հաստատելու մասին» N 135 որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կ Ա Ր Գ

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆՆԵՐԻ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇՈՒ ՎԱՐՄԱՆ

1. Սույն կարգով կանոնակարգվում են Լեռնային Ղարաբաղի Հանապետությունում օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռի (այսուհետ՝ հաշվեկշիռ) վարման ընթացակարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվեկշիռը վարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ լիազոր մարմին):

3. Հաշվեկշիռը կազմվում է հիմք ընդունելով պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա հաստատված օգտակար հանածոների պաշարները, և փոփոխվում է ընդերքօգտագործողների կողմից լիազոր մարմին ներկայացված տարեկան հաշվետվություններին (այսուհետ՝ հաշվետվություն) համապատասխան: Այն պետք է պարունակի տեղեկություններ արդյունաբերական նշանակություն ունեցող հանքավայրերում պարփակված՝ բոլոր տեսակի օգտակար հանածոների պաշարների քանակի, որակի և ուսումնասիրվածության աստիճանի, գործող կամ նախագծվող արդյունաբերական կազմակերպության՝ հաստատված պաշարներով ապահովվածության մասին:

4. Լիազոր մարմինը պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացությունը և օգտակար հանածոների հաստատված պաշարների մասին տեղեկությունն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հաշվեկշռի վարման մատյանում կատարում է համապատասխան գրանցում:

5. Հաշվեկշռի վարման մատյանում գրանցման ենթակա են բոլոր տեսակի (պինդ, հեղուկ և գազային) օգտակար հանածոների հաստատված պաշարները:

6. Հաշվեկշիռը կազմվում է յուրաքանչյուր տարվա հունվարի մեկի դրությամբ՝ ըստ հանքավայրերի ու տեղամասերի, ինչպես նաև՝ ըստ օգտակար հանածոների արդյունահանման և օգտագործման նպատակային նշանակության:

7. Հաշվեկշռում հանքավայրերը խմբավորվում են ըստ շրջանների, որոնցում հանքավայրերը բաշխվում են ըստ արդյունաբերական իրացման հետևյալ դասակարգման՝

1) շահագործվող ու շահագործման նախապատրաստվող հանքավայրերի լրահետախուզման փուլում գտնվող.

2) շահագործվող.

3) պահուստային:

8. Հաշվեկշռում փոփոխությունները և օգտակար հանածոների մարված պաշարների դուրսգրումը կատարվում են ընդերքօգտագործողների կողմից ներկայացված մարկշեյդերական չափագրումների արդյունքում կազմված հաշվետվությունների հիման վրա:

9. Լիազոր մարմինը հաշվետվություններն ստանալուց հետո ամփոփում է դրանք և մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա ապրիլի մեկը հաշվեկշռում կատարում է համապատասխան փոփոխություններ:

10. Օգտակար հանածոների արդյունահանման, ինչպես նաև երկրաբանահետախուզական աշխատանքների արդյունքում արդյունաբերական նշանակությունը կորցրած կամ չհավաստված պաշարները դուրս են գրվում պետական ընդերքաբանական փորձաքննության եզրակացության հիման վրա՝ այն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հաշվեկշռի վարման մատյանում կատարելով համապատասխան փոփոխություններ:

11. Հաշվեկշիռը գրանցվում և դրանում կատարվող փոփոխություններն իրականացվում են հաշվեկշռի վարման մատյանում, որի օրինակելի ձևը սահմանում է լիազոր մարմինը:

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ